ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-2»

ք. Երևան «17» մայիսի 2019թ.

Դատական դեպարտամենտն, ի դեմս ղեկավար Կարեն Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տիգրան Խանոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 774 000 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ***365*** օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **27** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Ջի Վի Էն» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 41/1
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01231258
ՀՀ՝	ՀՀ՝ 2474401187650000
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Տ. Խանոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" [illegible] 18-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
«17» մայիսի 2019թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը*	արտադրողի անվանումը և ծագման երկիրը*	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
3	38651160/501	3.Թվային լուսանկարչական ապարատներ, Canon EOS 6D Mark II DSLR Camera with 24-105mm f/4L II Lens	Canon, Ճապոնիա, Թայվան, ԱՄՆ, Չինաստան և այլն	Ֆոտոխցիկի ձևաչափ. Ամբողջական կադր (կտրվածքի գործոն՝ 1.0x), Պիքսելներ.Փաստացի առնվազն՝ 27.1 Մեգապիքսել, Արդյունավետ առնվազն՝ 26.2 Մեգապիքսել, Մաքսիմալ թույլտվություն՝ 26 MP, 6240 x 4160, Կողմերի հարաբերակցություն՝1:1 3:2, 4:3, 16:9, Սենսորի տեսակ / Չափ CMOS, 35.9 x 24 մմ, Ֆայլի ֆորմատներ.Անշարժ նկար՝ JPEG, RAW, Շարժական՝ MJPEG, MOV, MP4, MPEG-4 AVC/H.264, Ձայնային՝ AAC,Բիտ խորություն՝ 14-Bit,Փոշու հեռացման համակարգ,Հիշողությ	հատ	2 580 000	2 580 000	1	ք.Երևան, Կորյուն 15, 17	1	Այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օրվա ընթացքում (Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և

				ան քարտի տեսակը՝SDXC, SDHC, SD, Պատկերի կայունացում՝ թվային, 5-եղանակով,Ֆոկուսիկա ռավարում.Ֆոկուսի տեսակ՝Ավտոֆոկուս,Ֆոկուսի ռեժիմ՝ Ավտոմատ (A), Շարունակական սերվո AF (C), Ձեռքով ֆոկուս (M), Մեկ սերվո AF (S),Ավտոֆոկուսի կետեր՝ Փուլային հայտնաբերում: 45 (45 խաչաձև տեսակ),Տեսախցիկ/Ցուցադրման էկրան (display)Տեսախցիկի տեսակ՝ Օպտիկական,Տեսախցիկի աչքի շրջանակ՝ 21.00 մմ, Տեսախցիկի ցուցադրման հնարավորությունը՝ 98%, Տեսախցիկի խոշորացումը առնվազն՝ 0.71x, Դիոպտերի ճշգրտում՝ -3 -ից +1 m, Էկրանի ցուցադրություն՝ 3 "Շրջվող սենսորային էկրան" LCD,Էկրանի ցուցադրման հնարավորությունը՝ 100%, Պատկերի անկյունագիծ՝ 170.0°, Էկսպոզիցիայի կառավարում՝ISO Զգայունություն՝ Ավտո, 100-40000 (Ընդլայնված ռեժիմ: 50-102400),							դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը):

				Փականակ.Տեսակ՝ Մեխանիկական,Արագություն՝ 30 Վայրկյան , Լամպ ռեժիմ, Հեռակառավարում՝ TC-80N3, RS-80N3 (Լրացուցիչ),Հայելիի կողպում, Չափման մեթոդ՝ Կենտրոնամետ միջին չափում, Գնահատվող չափում, Մասնակի չափում, Կետավոր չափում,Էկսպոզիցիայի ռեժիմ. Ռեժիմներ՝Դիաֆրագմայի գերակայություն, Ավտո, Ձեռքով կարգ., Ծրագրված Ավտո, Փակաղակի գերակայություն,Չափման միջակայք՝ EV 1.0 - EV 20.0,Հավասարակշռում՝ -5 EV ից մինչ +5 EV (1/3-ում կամ 1/2 EV Քայլեր),Բուֆեր/Ընդհատվող նկարում՝ Մինչև 6.5 fps 26.2 MP-ով Մինչև 3 fps 26.2 MP-ով,Սպիտակության բալանսի ռեժիմները՝ Ավտո, Ամպամած, Գունային ջերմություն, Անհատական, բնական լուսավորություն, Ֆլեշ, Ֆլուորեսցենտ (Սպիտակ), Ստվեր, Վոլֆրամ, Առավելագույն Սինխրոնիզացիայի Արագություն՝ Մեխանիկական Փակաղակ: 1 / 180 Վայրկյան,Ֆլեշ							

				հավասարակշռում՝-3 EV –ից մինչ +3 EV (1/3-ում կամ 1/2 EV քայլերով),Նախատեսված ֆլեշ համակարգ eTTL,Արտաքին ֆլեշ միացում՝ Կենտրոնական սինխրոկոնտակտ,AV Ձայնագրում.Տեսաձայն ագրում Այո, NTSC/PAL,Վիդեո ֆորմատ՝ 1920 x 1080p at 23.98/25/29.97/50/59.94 fps 1280 x 720p at 23.98/25/29.97/50/59.94 fps, Անկյունագիծ՝ 16:9, Լուսակայման կարգավորում. Ավտո՝ Փակաղակի արագություն, Ապերտուրա, ISO,Ձեռքով կառավարում՝ Փակաղակի արագություն, Ապերտուրա, ISO,ISO Զգայունություն՝ Ավտո, 100 – 25600, Լուսակայման հավասարակշռում՝-3 EV ից մինչ +3 EV (1/3-ով EV քայլեր),Ֆոկուս՝ Ավտո,Ձեռքով կարգավորում,Շարունակական Ավտո,Տեսահոլովակի մաքսիմալ երկարություն՝ 1920 x 1080: 29 բոպե, 59 վայրկյան,Աուդիո ձայնագրում՝ Ներկառուցված միկրոֆոն, Վիդեո (Ստերեո) Լրացուցիչ							

				արտաքին միկրոֆոն, Վիդեո(Ստերեո),Արտադրողականություն. Գործի դնելու առավելագույն ժամկետ՝0.2 վայրկյան,Փականակի արձագանք՝ 0.06 վայրկյան, Վայրկյանացույց՝ 10 վայրկյան, 2 վայրկյան, Ընդմիջումներով նկարահանում,Միացումներ՝ 1/8" Միկրոֆոն, Canon N3, HDMI C (Mini), Mini-USB, USB 2.0,Wi-Fi-ի հնարավորություն, Սնուցում. Մարտկոց՝ 1 x LP-E6N Վերալիցքավորվող Lithium-Ion Մարտկոց, 7.2 VDC, 1865 mAh,AC հոսանքի ադապտեր՝AC-E6N with DR-E6 (Լրացուցիչ), Օգտագործման/Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճան՝ Աշխատանքային՝ 32 to 104°F (0 to 40°C),Խոնավություն՝ 0 - 85%, Հավաքածուի ոսպնյակի տվյալները. Ֆոկուսային հեռավորություն՝ 24 – 105մմ, Ապերտուրա՝ Առավելագույն՝ f/4Նվազագույն՝ f/22, Դիտարկման անկյուն՝ 84° - 23° 20', Նվազագույն ֆոկուսային հեռավորություն՝ 17.72"							

				/ 45 սմ, Խոշորացում՝ 0.23x, Առավելագույն վերաարտադրման ցուցանիշ՝ 1, 4.35, Օպտիկայի կառուցվածք՝ 17 Տարրեր 12 Խմբերում, Դիաֆրագմայի շեղբեր 10, Կլորավուն, Ավտոֆոկուս,Նկարի կայունացում,Ֆիլտրներ ի համակցման հարմարանք՝ Դիմային՝ 77 մմ, Չափսեր (DxL) 3.29 x 4.65" / 83.5 x 118 մմ /+-1% շեղում/, Կրիչի տեսակ՝SanDisk 64GB Extreme UHS-I SDXC Memory Card Հիշողության ծավալ՝ 64 GB, Հաշվարկման տեսակ՝UHS-I,Արագության դաս՝ 10, UHS Արագության դաս՝ U3,Տվյալների փոխանակման ինտերֆեյսային արագություն՝ UHS Class I, Տվյալների փոխանցում. Կարդալու առավելագույն արագություն՝ 90MB/s,Գրելու առավելագույն արագություն՝ 40 MB/s,Գրելու առավելագույն արագություն՝ 30 MB/s, Դիմակայունություն՝ Հակահարվածային, Բարձր ջերմակայունություն, Ջրադիմացկուն, Ռենտգենային ճառագայթների							

				դիմակայունություն,Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճան՝ -13 to 185°F/ -25 to 85°C, Պահպանման թույլատրելի ջերմաստիճան՝-40 to 185°F/ -40 to 85°C,Սխալների ուղղում, Ներկառուցված ձայնագրման պաշտպանության անջատիչ, Մարտկոցներ. Watson LP-E6N Lithium-Ion Battery Pack (7.2V, 2000mAh)Քիմիական բաղադրությունը՝ Lithium-ion, Տարողունակություն՝ 2000 mAh, լարում՝ 7.2 V,Վատ-ժամեր՝ 14.4Wh, Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճան՝ 15 to 105°F / -10 to 40°C,Պահպանման ջերմաստիճան՝ 59°F / 15°C, Լիցքավորիչ. Watson Duo LCD Charger with Two LP-E6 / LP-E6N Battery Plates AC Մուտքային լարում՝100 to 240 VAC, 50 / 60 Hz,DC Մուտքային լարում՝ 12 / 24 VDC at 2000 mA, Ելքային վոլտաժ՝ 1.2 - 8.4 VDC, 2000 mA, Լիցքավորման ժամկետ՝ 2 -ից 6 ժամ,USB մուտք՝ 1 x USB Type-A, USB դուրս							

				եկող լարում՝ 2000 mA,Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճան՝ 32 to 104°F / 0 to 40°C,Պահպանման ջերմաստիճան՝ -4 to 140°F / -20 to 60°C,Մալուխի երկարությունը՝ 56.4" / 140 սմ, Պայուսակ. Case Logic Kontrast DSLR Shoulder Bag (Black)Արտաքին կտորի տեսակը՝ Պոլիեսթեր,Տափակ գրպանով, Գույնը՝ սև, Ջրադիմակայություն՝ Անձրևից պաշտպանիչ,Տեսագրման խոսափող. Rode VideoMic Pro with Rycote Lyre Shockmount Ակուստիկ սկզբունքներ՝ Գծային գրադիենտ կոնդենսատոր, Ուղղորդման ձևը՝ Սուպերկարդիոդ,Հաճախականության տվյալներ՝ 40 Hz - 20 kHz (selectable HPF @80 Hz)Զգայունություն՝ -32 dB re 1 V/Pa (20 mV @ 94 dB SPL) ± 2 dB @ 1 kHz, Ելքային ազդանշանի դիմադրողականություն՝ 200 Ohms,Համարժեք աղմուկ՝ 14 dB,Մաքսիմալ ելքային ազդանշան՝+6.9 dBu (@ 1% THD into 1 kOhms), Դինամիկ							

				ձայնածավալ՝ 120 dB (as per IEC 651), Մաքսիմալ SPL՝ 134 dB (@ 1 kHz, 1% THD into 1 kOhms load),Ձայն-աղմուկ հարաբերակցություն՝ 80 dB,Մարդկոցի տեսակ՝ 1 x 9 V ալկալային մարտկոց (ընթացիկ 7.8 mA),Մակարդակի վերահսկողություն՝Երեք դիրք (-10 dB, 0, +20 dB), Բարձր հաճախականության ֆիլտր՝Two-step (flat, 80 Hz), Ելքային միացումներ՝ 1 x 1/8" (3.5 mm) stereo mini-jack (dual mono),Ցածր հաճախականության անկում՝ 80 Hz High Pass Filter,Ուսին ֆոտոխցիկը պահելու սարք.Revo SR-1000 Shoulder Support Rig (Black)Ծավալ՝ 5.5 lb (2.5 կգ),Համակցման տեսակ՝ 1/4"-20 խցիկը համակցելու պտուտակ,Չափսերը՝ 19 x 10" (48 x 25 սմ),Մարտկոց. Մարտկոցի տեսակը՝ Energizer 9V Alkaline Batteries 1 x 9 V, Մարտկոցի քիմիական բաղադրությունը՝ Ալկալիային,Մարտկոցի վոլտաժ՝ 9 VՄարտկոցի չափսեր՝H: 1.9 x W: 0.7 x L: 1.0" / H: 48.5 x W: 17.5 x L: 26.5 mm,Մարտկոցի քաշ՝ 1.6 oz / 45.4 g,							

				Պահպանման ջերմաստիճան՝ -4 to 95°F / -20 to 35°C Օգտագործման ջերմաստիճան՝ -1 to 130°F / -20 to54°C: Ալյումինե եռոտանի (տրիպոդ) համակարգ. Manfrotto 504HD Head w/546B 2-Stage Aluminum Tripod SystemԱռավելագույն բարձրությունը՝ 66.7" (169.4սմ),Նվազագույն բարձրությունը՝ 17.9" (45.5սմ), Երկարությունը փակված վիճակում՝33.3" (84.6սմ),Պղպջակով ցուցիչ/Լուսավորված, Հաշվարկվող բալանսային համակարգը՝ 4-Քայլ, Արագ բացում/Սեպաձև թիթեղ,Հավասարակշռության թիթեղ Սահող, 1/4" և 3/8" պտուտակներով, Գլխիկի շարժում՝ Շարունակական, Շարժման անկյուն՝-60° / +90°,Շարժման փական՝ Անկախ,Հակակշիռային համակարգ՝ Շարունակական,Պանորամային դիապազոն՝ 360°, Պանորամային պտուտակի փական՝ Անկախ, Հենակներ. Նյութ՝ Ալյումին,Գլխիկի կցման սարք՝ 75մմ Գնդաձև,Հենակների փուկերը/Սեկցիաներ՝							

				2/3, Հենակների կողպման տեսակ՝ Բացվող լծակ, Հենակների անկախ բացում, Սույր ծայրով/Ձգվող ոտքեր, ռետինային ծածկույթով, Կենտրոնական կեռ՝ Միջին մակարդակի բաշխիչ, (Mid-level Spreader)							
5	32341100/501	5.Խոսափողներ, Sennheiser ew 100 ENG G4-B	Sennheiser, Գերմանիա, Չինաստան և այլն	RF փոխադրողի հաճախականության տիրույթ (Բ: 626-ից 668Մhg),20 ալիք ունեցող բանքեր, 1 օգտիրոջ բանք, 12 գործիքաշար յուրաքանչյուր բանքին,Approx. Working Range Մոտավոր աշխատանքային շրջանակ՝ առավելագույնը՝ 330', Ազդանշան-Աղմուկի Հարաբերակցություն՝ ≥ 110 dB,Ալիքներ՝ 1680,RF Ելքային հզորություն առնվազն՝ 30 mW,Սքուելչ՝ Անջատված/Ցածր /Միջին /Բարձր,Ընդունիչ Ընդունիչի տեսակ EK 100 G4 bodypack/camera-mount receiver,Ելքային տեսակներ՝ 1/8" Մինի-ջեք, Մարտկոցի տեսակը՝2 x AAմարտկոցներ, մինչև 8 ժամ, Էկրան՝ արտաքին լուսավորության LCD	հատ	598 800	598 800	1	ք.Երևան, Կորյուն 15, 17	1	Այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օրվա ընթացքում (Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրերը

				էկրան, Մոնտաժի ընտրանքներ՝ տեսախցիկ և գոտի, Ալեհավաքի տեսակ՝ մեկ ճկուն ալեհավաք (M3տեսակի), Փոխադրիչ Փոխադրիչի տեսակ՝ SK 100 G4 կամ համարժեք բադիփեկ փոխադրիչ, Մուտքային միակցիչի տեսակ՝ անհավասարակշիռ փական 1/8" (3.5 մմ), միկ/գիծ, Բարձրախոսի տեսակ՝ ME 2-II լավալիեր բարձրախոս, Մարտկոցի տեսակը՝ 2 x AA մարտկոցներ կենսունակություն: մինչև 8 ժամ, Խլացնող անջատիչ՝ Այո Մակարդակի վերահսկիչ՝ Այո, Փոփոխական Բարձրախոսի մուտքային մակարդակ, Ալեհավաքի տեսակը՝ M3 տեսակի, Էկրան՝ Բարձր հակադրությամբ LCD էկրան, կապույտ համաժամեցման LED,Փոխադրիչ. Փոխադրիչի տեսակը SKP 100 G4 կամ համարժեք միակցման հաղորդիչ, Մուտքային միակցիչի տեսակը XLR իգական Փոխարինելի Միկ գլխիկներ Ցանկացած բարձրախոս խոսափող 3-պին XLR արական							ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը):

				ելքով, Մարտկոցի տեսակ՝ 2x AA մարտկոցներ Կենսունակություն՝ Մինչև 8 ժամ,Խլացնող անջատիչ՝ Այո, ծրագրավորվող, Մակարդակի վերահսկողություն՝Այո, Փոփոխական Բարձրախոսի մուտքային մակարդակ, Ալեհավաքի տեսակը՝ Օգտագործում է խոսափողի մարմինը որպես ալեհավաք,Էկրան՝ Բարձր հակադրությամբ LCD էկրան, կապույտ համաժամեցման LED:Senal ENG-18RL Հեռարձակում Բազմաուղղվածության բ դինամիկ բարձրախոս (երկար), Բևեռային նմուշ՝ Բազմաուղղվածության բ, Տարրի տեսակ՝ Դինամիկ,Ելքային միակցիչ՝ 3-Pin XLR ար, Հաճախականության արձագանք՝ 50 Հg - 18 կՀg, Ելքային կայունություն՝500 Ohms, Զգայունություն՝ 2.2 mV/Pa, Գործի նյութեր՝ Ալումինիում:Auray UPOH-B Universal Plug-On Transmitter Holster.Կառուցվածքի նյութը՝ Կաշի Փակման տեսակը՝ Հպեք սեղմիչը, Փոխադրում/							

				տրանսպորտային միջոցներ՝ Belt clip, Չափսեր (Բ xՔ xԽ)4.0 x 2.0 x 2.0" / 10.2 x 5.1 x 5.1 սմ: SKB iSeries Waterproof Case for 2 Sennheiser ENG Systems or 2 Senal Systems. Կառուցվածքի նյութ՝ Ներարկում համաձուլված պոլիպրոպիլենային կոպոլիմերայի խեժով, Փակման տեսակ՝ Ձգվող լծակներ,Փոխադրում/ տրանսպորտային միջոցներ՝ Custom-grip handle Արտաքին չափսերը (Ե xՔ x Խ) 13.2 x 11.1 x 5.2" (33.5 x 28.2 x 13.2 սմ):Vello V-Rig 4.1" Triple Shoe Bracket. Bottom Moun't 1 x Աքսեսուար Top Mount՝ 3 x Աքսեսուար Նյութ՝ Ալիմինիում:							
7	31442100/502	7.Կուտակիչ մարտկոցներ, Watson MX 4-Hour Rapid Charge and 4 MX AA NiMH Batteries	Watson, Չինաստան	Մարտկոցի տեսակ՝ 4 x AA,Մարտկոցի քիմիա՝ NiMH,Մարտկոցի լարում 1.2Վ Հզորություն՝ (mAh) 2550 mAh,AC Մուտքային հզորություն՝ 100 to 240 VAC, 50 / 60 Hz, Լիցքավորվող բեյեր՝ 4 x AA, AAA:	հատ	18 480	92 400	5	ք.Երևան, Կորյուն 15, 17	5	Այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օրվա ընթացքում (Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություն

											ների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը):
8	30236180/501	8.Օպերատիվ հիշողության քարտեր (վերազինում, տեղադրում), Lexar 64Gb Professional 1000x UHS-II SDXC Memory Card	Lexar, Չինաստան, Կորեա	Քարտի տեսակ՝ SDXC,Պահպանման հզորություն՝ 64 ԳԲ Bus Type UHS-II, Արագության դասը՝ 10,UHS արագության դասը՝ U3,Արագություն՝ (X-վարկանիշ) 1000x,Տվյալների փոխանցում Կարդալու արագություն՝ 150 ՄԲ առավելագույնը (Burst), Գրելու արագություն՝ 75 ՄԲ առվելագույնը (Burst), Գրելու արագությունը՝ 30 ՄԲ նվազագույնը, Ներկառուցված գրելու-պաշտպանություն անցում:	հատ	18 900	37 800	2	ք.Երևան, Կորյուն 15, 17	2	Այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օրվա ընթացքում (Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություն ների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ապրանքների

											մատակարարման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը):
9	32341100/501	9.Խոսափողներ, Sennheiser ew 100 ENG G4-B	Sennheiser, Գերմանիա	RF փոխադրողի հաճախականության տիրույթ (Բ: 626-ից 668Մհց),20 ալիք ունեցող բանքեր, 1 օգատիրոջ բանք, 12 գործիքաշար յուրաքանչյուր բանքին,Approx. Working Range Մոտավոր աշխատանքային շրջանակ՝ առավելագույնը՝ 330', Ազդանշան-Աղմուկի Հարաբերակցություն՝ ≥ 110 dB, Ալիքներ՝1680,RF Ելքային հզորություն առնվազն՝ 30 mW,Սքուելչ՝ Անջատված/Ցածր /Միջին /Բարձր, Ընդունիչի տեսակ EK 100 G4 bodypack/camera-mount receiver,Ելքային տեսակներ՝ 1/8" Մինի-ջեք, Մարտկոցի տեսակը՝ 2 x AA մարտկոցներ,	հատ	465 000	465 000	1	ք.Երևան, Կորյուն 15, 17	1	Այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օրվա ընթացքում (Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև

				մինչև8 ժամ, Էկրան՝ արտաքին լուսավորության LCD էկրան, Մոնտաժի ընտրանքներ՝ տեսախցիկ և գոտի, Ալեհավաքի տեսակ՝ մեկ ճկուն ալեհավաք (M3տեսակի),Փոխադրիչի տեսակ՝ SK 100 G4 կամ համարժեք բաղիփեկ փոխադրիչ, Մուտքային միակցիչի տեսակ՝ անհավասարակշիռ փական 1/8" (3.5 մմ), միկ/գիծ,Բարձրախոսի տեսակ՝ ME 2-II լավալիեր բարձրախոս,Մարտկոցի տեսակը՝ 2 x AA մարտկոցներ կենսունակություն: մինչև 8 ժամ,Խլացնող անջատիչ՝ Այո Մակարդակի վերահսկիչ՝ Այո, Փոփոխական Բարձրախոսի մուտքային մակարդակ, Ալեհավաքի տեսակը՝ M3 տեսակի,Էկրան՝ Բարձր հակադրությամբ LCD էկրան, կապույտ համաժամեցման LED,Փոխադրիչ. Փոխադրիչի տեսակը SKP 100 G4 կամ համարժեք միակցման հաղորդիչ, Մուտքային միակցիչի տեսակը XLR իգական Փոխարինելի Միկ գլխիկներ Ցանկացած							կնքված համապատասխան համաձայնագրերը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը):

				բարձրախոս խոսափող 3-պին XLR արական ելքով, Մարտկոցի տեսակ՝ 2x AA մարտկոցներ Կենսունակություն՝ Մինչև 8 ժամ,Խլացնող անջատիչ՝ Այո, ծրագրավորվող, Մակարդակի վերահսկողություն Այո, Փոփոխական Բարձրախոսի մուտքային մակարդակ, Ալեհավաքի տեսակը՝ Օգտագործում է խոսափողի մարմինը որպես ալեհավաք, Էկրան՝ Բարձր հակադրությամբ LCD էկրան, կապույտ համաժամեցման LED:							

Ապրանքները պարտադիր պետք է լինեն չօգտագործված և գործարանային փաթեթավորմամբ:
Գնման առարկա հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքների ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացույցային օրը:

** Վաճառողը կարող է ապրանքները մատակարարել պայմանագրով սահմանված ժամկետից ավելի կարճ ժամկետում:*
***Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ՝
ՀՀ ԳՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Տնօրեն՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ջի Վի Էն» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 41/1
ՀՎՀՀ՝ 01231258
ՀՀ՝ 2474401187650000
«Արդշինբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Տ. Խանոյան

(ստորագրություն)

Հավելված N 2
«17» մայիսի 2019թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20—թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	38651160/501	3. Թվային լուսանկարչական ապարատներ													
5	32341100/501	5. Խոսափողներ													
7	31442100/502	7. Կուտակիչ մարտկոցներ													
8	30236180/501	8. Օպերատիվ հիշողության քարտեր (վերագինում, տեղադրում)													
9	32341100/501	9. Խոսափողներ													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ՝
[illegible] աշխատակազմի գործառնական վարչություն
[illegible]՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ջի Վի Էն» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 41/1
ՀՎՀՀ՝ 01231258
ՀՀ՝ 2474401187650000
«Արդշինբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Տ. Խանոյան

(ստորագրություն)

Հավելված N 3
« » 2019թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-2» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2019թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-2» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն